ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՈ/05-2022 *ք.Արտաշատ*

„11„ 01 2022թ.

ԷՄՄԱ ՍԵՐԳԵՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածով և 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 12.10.2021 թվականի N ՄՈ/312-2021 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից սույն թվականի դեկտեմբերի 17-ին «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրության ընթացքում կազմված տեղեկանքը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

<<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի պահանջը ոչ պատշաճ կատարելու՝ դպրոցի կանոնադրության 48-րդ կետի 2-րդ, 8-րդ, 17-րդ ենթակետերի, 77-րդ կետի, << Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները խախտելու համար «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի N3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էմմա Սերգեյի Մուրադյանին նկատմամբ կիրառել նկատողություն կարգապահական տույժ:

Восстановимая подпись

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616 Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ